



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան

«26» օգոստոսի 2013 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N^o 31 Ա/Ք

«ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՈՒՄ» ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության համակարգում գործող գիտության պետական կոմիտեի կանոնադրության 12 կետի 1-ին ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել՝

«Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում» ծախսային ծրագրի ֆինանսական միջոցներով սարքավորման ձեռքբերման հանձնարարության պայմանագրի ձևը՝ համաձայն հավելվածի.

2. Հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Գ. Մելիքսեյանին՝ սույն հրամանը և հավելվածը տեղադրել Կոմիտեի էլեկտրոնային պաշտոնական կայքում.

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՆԱԽԱԳԱՀ՝

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

**«ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹՍԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶՄՅԻ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ
ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ**

ք. Երևան

«___» _____ 2013 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս Կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի (այսուհետ՝ Հանձնարարող), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____-ը, ի դեմս

(գիտական կազմակերպության անվանումը)

տնօրեն (ռեկտոր)՝ _____-ի

(անունը, ազգանունը)

(այսուհետ՝ Հանձնակատար), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 782-րդ հոդվածը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հանձնարարողը սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող նախահաշվի հիման վրա Հանձնակատարին է տրամադրում ֆինանսական միջոցներ՝ նախահաշվով նախատեսված սարքավորման ձեռքբերման համար:

1.2 Սույն պայմանագրի իմաստով ապրանք է համարվում _____-ի

(գիտական կազմակերպության անվանումը)

գործունեությանն անհրաժեշտ _____-ը:

(սարքավորման անվանումը)

1.3 Հանձնարարողը ֆինանսական միջոցները տրամադրում է ՀՀ պետական բյուջեով նախատեսված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում» ծախսային ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցներից:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Հանձնարարողը սույն պայմանագրի 3.1 կետով նախատեսված ֆինանսական միջոցները Հանձնակատարին տրամադրում է սույն պայմանագրի կնքման օրվանից 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում:

2.2 Հանձնակատարը սույն պայմանագրի 1.2 կետում նշված ապրանքը ձեռք է բերում Հանձնարարողի կողմից ֆինանսական միջոցներն ամբողջությամբ տրամադրելուց հետո՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

3.1 Սույն Պայմանագրի գինն է (տրամադրվող ֆինանսական միջոցների չափը)
_____ (թվերով և բառերով)

ՀՀ դրամ, որը տրամադրվում է Հանձնակատարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Հանձնարարողն իրավունք ունի.

4.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Հանձնակատարի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացքը, պահանջել և ստանալ կատարված աշխատանքներին առնչվող բոլոր փաստաթղթերը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

4.1.2 Մինչև ֆինանսական միջոցների տրամադրումը հրաժարվել սույն պայմանագրի կատարումից:

4.2 Հանձնակատարն իրավունք ունի.

4.2.1 Ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Հանձնարարողին վերադարձնելով տրամադրված ֆինանսական միջոցները:

4.2.2 Հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Հանձնարարողի կողմից սույն պայմանագրի 2.1 կետի խախտման դեպքում:

4.3. Հանձնարարողը պարտավոր է.

4.3.1 Սույն պայմանագրով սահմանված ժամկետում տրամադրել նախատեսված ֆինանսական միջոցները:

4.3.2 Ընդունել Հանձնակատարի կողմից ներկայացվող բոլոր փաստաթղթերը՝ սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում:

4.4 Հանձնակատարը պարտավոր է՝

4.4.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարել անձամբ և սահմանված ժամկետում:

4.4.2 Սույն պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարելիս առաջնորդվել ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Գնումների մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքների պահանջներով:

4.4.3 Ապրանքի ձեռքբերման օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնարարողին ներկայացնել հաշվետվություն՝ կից ներկայացնելով ձեռքբերման անհրաժեշտ փաստաթղթերը (բեռնային մաքսային հայտարարագրեր, հաշիվ-ապրանքագրեր և այլն):

4.4.4 Հանձնարարողի պահանջով նրան տրամադրել պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

4.4.5 Սույն պայմանագրի գնի փոփոխության դեպքում անհապաղ տեղեկացնել Հանձնարարողին, իսկ հավելուրդ առաջանալու դեպքում, դրա հայտնի դառնալու օրվանից

հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ետ փոխանցել ավելացած ֆինանսական միջոցները:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

6.2 Սույն պայմանագիրը կարող է վաղաժամ լուծվել սույն պայմանագրով, ինչպես նաև գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.2 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՂ

ՀՀ ԿԳՆ գիտության պետական
կոմիտե

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22
Հ/հ 900011033066 ՀՀ ՖՆ գործառնական
վարչություն

Կոմիտեի նախագահ՝

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ

Կ.Տ.